

“Droschak”

ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

Adresse:  
Rédaction du “Droschak”  
GENÈVE (Suisse)

## “ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԽԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### ՀԱՅԱԶԻՆՁ ԴՐՈՇԱԿԻ ԹԻՒՆԸ

—o—

Ուշի ուշով կարգացէք մեր ընկերոջ սրտառուչ տեղեկագիրը Տարծոյ և շրջակայքի մասին. նա այլևս չի գուժում աղետաբեր անակնկալներ, չի նկարագրում խմբական ահռելի ջարդեր — ո՛չ, Տաճկահայաստանը «խաղաղուէլ է»... Եւ այժմ այդ երջանիկ խաղաղութեան վայրերից տարբեր ձայներ են հնչում, տարբեր շղթաների ու սրերի շառաչին... Հարկահանութիւն, հարստահարութիւն, կօռ ու բէգեար. — առերևոյթ սարսափելի չեն: Այո, սարսափելի չեն դրանք, երբ կատարուում են շատ թէ քիչ բարեկարգ երկրներում, ուր նահանուում է և յարգուում օրէնքը: Բայց չմոռանանք, որ Թիւրքիայի մասին է խօսքը, ուր կարգ ու կանօնի տեղ բացարձակ անիշխանութիւն է տիրում, ուր օրինաւորութեան փոխարէն՝ թագաւորում է անսանձ կամայականութիւնը: Ղաղուց ծամծուած ու հնացած ճշմարտութիւններ... սակայն դեռ քանիցս պիտի կրկնւին նրանք, մինչև որ համոզեն բոլոր կարճատեսներին ու ապիկարներին, որոնք տակաւին օրօրում են խարուսիկ երազներով՝ թէ օսմանեան կառավարութիւնը երբ և իցէ կը փորձէ ինքնաբերաբար կարգ մըտցնել այդ անիշխանութեան մէջ:

Տարծոյ տեղեկագիր... ամէն մի տողից արիւն ու արտասուք է կաթում: Երբ կարգում էք, թէ ինչպէս հայ խղճուկ գիւղացին՝ իր ամէն ինչքը յափշտակած, իր զաւակները մերկ ու անօթի թափառելիս, մատնում է անվերջ ու չարքաշ աշխատանքի սոսկ օտարների քմահաճոյքին յազուրդ տալու համար, երբ լսում էք, թէ որպիսի հրէշային պայմաններում է կատարում այդ դժոխային աշխատանքը՝ միացած ծեծի ու բռնութիւնների, անպատուութեան և ամէն տեսակ վայրագութիւնների հետ, որոնք միայն յատուկ են թիւրք պաշտօնեաներին, ակամայ մղում էք երևակայութեամբ դէպի հինաւուրց գերութեան ժամանակները, երբ մարդկային ամէն արժանապատուութիւն առօրին էր համարում, երբ մարդ-էակը մի անշուշտ իր էր հզօր ու բունակալ իշխողների ձեռքում... «Չաղիր ստրուկ, աշխատիր ու տանջւիր. յանուն տիրոջ շահի՝ պարտաւոր ես

տանջւելու...» Եւ հլու, անասնական հնազանդութեամբ գործում էր ստրուկը:

Անիշխան օրերի այդ քստմենքի գերութիւնը յարութիւն է առել այժմեան Տաճկաստանում, և այն դեռ աւելի յետախաղաց պատկերնուի: Հոռօթի կամ Յունաստանի գերին ապրում ու աճում էր ապահով. նրա պատիւն էին բռնաբարում, նրա ամէն մարդկային իրաւունքներն էին ոտնատակ տալիս, բայց նա ապրում էր, և նրա կեանքը չէին յափշտակում: «Քաղաքակրթւած» Թիւրքիայի մէջ այդ վերջին արտօնութիւնը ևս խըլւած է հայից, «Չաղիր գեաւուր, աշխատիր ու տնքա՛, պարտաւոր ես միշտ տնքալու, որովհետև գեաւուր ես»: Բայց այդ բաւական չէ. դրա վրայ աւելանում է և անագորոյն դատավճիռը՝ «Մեռիր գեաւուր...» Այո, հայը նոյն իսկ հնադարեան ստրուկին էլ նախանձելու պատճառ ունի:

Կօռ ու բէգեար անօրինակ բարբարոսութիւններով, առասպելական ձևի հարկահանութիւն, ուր ամէն մի սղորուկ պաշտօնեայ իր բաժինն ունի — և այդ բոլորը մշտնջենաբար, դժբախտ հայրենիքի բոլոր անկիւններում... Ահա մի խարազան, որ աւելի սպաւնական ու աղետաբեր է, քան բոլոր ուրիշ խարազանները, քան նոյն իսկ խմբական կոտորածները: Կտրել, ցամաքեցնել ժողովրդի տնտեսական հասոյթները — ահա ամէնաւրմատական միջոցը նրան իսպառ բնջինջ անելու: Մի տեղ կառավարութիւնն է կեղեքողը, մի այլ տեղ աւելանում են և քիւրդ աւատականները: Երբեք օրինական գործողութիւն, երբեք մի կաթիլ անգամ անաչառութիւն. Տաճկաստանը ամենայն յամառութեամբ շարունակում է նիրհել մի քաօսային, խառնակ դրութեան մէջ, ուր ցոլանում են և ստրկութիւնն ու ֆէօդալականութիւնը, և միահեծան բռնապետութիւնն ու անսանձ, փաշայական անիշխանութիւնը և մերթ ընդ մեջ թ նոյնիսկ բացարձակ մարդակերութիւնը: Տաճկաստանը չի առաջագիտում, նա մոռում է թշնամի ու հակառակորդ ամէն բարեփոխումների, և այդպէս կը մնայ յաւեւ, մինչև որ մի արտաքին ուժ, մի վերկարար հոսանք չի ձեռքբիլ այդ անշարժութեան կեղևը և չի ոճնացնիլ Ազգիւ-Համիդական ներկայ ուժովը, որ տակից գլուխ ներկայացնում է մի կազմակերպւած աւագակութիւն, մի կատարելագործւած սիստէմ թալանի ու կողոպուտի: Մեր անդրդուելի համոզմունքն է այդ: Թող

ով որ կ'ուզէ՝ հայրենիքի դառն կացութիւնը ողբալով և՛ ղենայն, խաբուսիկ յոյսերով օգնութիւն աղերսէ մեր արիւննախում՝ թշնամուց. թող, ով որ կ'ուզէ, յեղափոխականներին տիրող չարիքների պատճառ համարէ և, յեղափոխութիւնն անիծելով՝ անցնէ հակայեղափոխականների, կամ յիսոհեմ հայրենասէրների՝ շարքը. թող, ով որ կ'ուզէ, երեսայաբար հաւատայ, որ Հայաստանում անդորրութիւն է տիրում, երբ այնտեղ չկան ապստամբական շարժումներ: Մենք վաղուց արհամարհել ենք այդ վտանգաւոր հաւատը, վաղուց հրաժեշտ ենք աւել խաբուսիկ երազներին: Օսմանեան կառավարութիւնը որոշել է բնաջինջ անել հայ անբաւական տարրը — ուրեմն ամբողջ օսմանեան հայութիւնը. խնդիրը միայն գործանրած միջոցների մէջ է: Այո՛, բայց մենք ևս անսասան ենք մեր որոշման մէջ՝ երբեք չզննել մեր սուրբ պատեանում, մինչև որ չեն վերանայ անիրաւութիւնն ու բռնութիւնները մեր սգաւոր հայրենիքից, մինչև որ հայաստանցին զուրկ կը մնայ մարդ-քաղաքացու իրաւունքներից: Եւ տանջւած հայութիւնը այսօր մեզ հետ միասին սուգորւած է մի գերագոյն տենչով՝ լաւ է մեռնել կուսելով, քան թէ ապրել տանջւելով:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**  
**Տ Ա Ր Օ Ն Ի Ե Ի Ե Ր Զ Ա Կ Ա Յ Գ Ի**

10/22 հոկտեմբեր 1897

Երկար տարիներէ իվեր կողմերս կատարուող խժոճութիւնները պարբերաբար տեղեկագրւած են մեր հայրենաբնակ և օտարաբնակ եղբայրներուն: Բայց երթալով հայ ժողովուրդի վիճակն այնքան կը ծանրանայ, իրար ետևէ անընդհատ կուգան այնքան արտասովոր անցքեր, ճնշման ու ոչնչացման նորանոր միջոցներ, որ կը փութանք ծանօթացնել կողմերուս ներկայ դրութիւնն ու պահանջը, կոչուած ընելով արտասահմանի մեր եղբայրներուն որ իրենց լուրջ ուշադրութիւնը դարձնեն դէպ այն բազմատանջ ժողովուրդը, որուն վիճակած է կարծես միայն սուղն ու տանջանքը:

Այս տարին ալ Մշոյ և շրջակայքի վրայէն կ'անցնի սգով ու սեռով: Տաճիկ կառավարութիւնը վերջնապէս որոշե՛ր է ջնջել ու ոչնչացնել հայ տարրը...

Այս ու այն կողմ ծագող խռովայոյզ դէպքերը անմիջապէս ընդհանուր կերպարանք կը ստանան. իսլամները րօպէսպէս կը պատրաստուին հայերը կոտորելու, սրի ճարակ դարձնելու. որովհետև այդ տեսակ որ և է դէպք մը՝ ուր որ ալ պատահած լինի, Պարսկաստանի սահմաններու մօտ, Թէսալիոյ դաշտը, թէ Մարդասպանին արիւննաների պալատին շուրջը, հայերու իսպառ ոչնչացման փողն է, որ կը հնչէ: Պէտք է խոստովանիք նաև, որ երթալով հայ ժողովուրդի արամագրութիւնը կը լաւանայ, կը կենդանանայ. ոչ թէ ապրիլ շնչելու համար, այլ այս յոճուհատ վիճակին վերջ մը տալու համար: Մարդասպան Համիդ, հարէմի գազան, դու չննայեցիր ո՛չ մի չարիք մեզ հայերուս. մի

խնայե՛ր այսուհետև ևս, մենք կը մեռնինք, կ'ոչնչանանք պատուով, մեր իրաւունքի գիտակցութեամբ. մեր խիղճը հանգիստ է, հոգ չէ թէ մեր դիակները թռչուններու կեր ըլլան, կամ մեր կիներու ու զաւակներու ոսկորներն անթաղ մնան արևու առաջ. մենք հաստատապէս համոզւած ենք, որ մեր կորստով կորուած ես և դու, ետևէդ թողնելով գարշանքի և յաւիտենական անէծքի յիշատակներ:

Հարստահարութեան նոր միջոցներ: — Արդէն պարբերաբար կատարուող բարբարոսութիւնները ժողովուրդը հասուցե՛ր են իր վերջին շունչին. միջոց չունի ապրելու այլևս: Անդու տքնող մշեցին միշտ անօթի ու ծարաւ է, մերկ ու բոքիկ: Չէ՛ որ սա այն ժողովուրդն է որ իր անխոնջ աշխատութեամբ կը պահէր սուլութանի սովալուսկ զօրքերը, պաշտօնեանները, վայրենի քիւրդը, որոնք հանգիստ նստելէն, ճնշելէն զատ, ուրիշ բանի ընդունակ չեն եղած մինչև հիմա: Այս տարին Մշոյ հայ ժողովուրդին համար աղիտաբեր դարձաւ: Տաճիկ կառավարութիւնը երկար-բարակ մտածելէն ետք, գտաւ այնպիսի միջոց մը, որ հայը ստիպւի անօթի մնալ, ստիպւի տուն-տեղ թողնել հաց մուրալ:

Բարեկարգութեանց ծրագրի յօդւածներէն մէկը միայն գործադրելով՝ հասաւ իր նպատակին. Աստուծ տաւ որ այդ սեփօրմներուն միւս յօդւածները չերագործեց, ապա թէ ոչ, այժմս հայ անունը չպիտի մնար կողմերս:

Գարնան բացելուն պէս, երբ հայ երկրագործը կը պատրաստէր ձմեռան թմրութեանն էլլել, դաշտ իջնել, աշխատիլ, քրտնիլ ու ապրիլ. յանկարծ ոստիկաններն հասան. — յճանապարհ պիտի շինուի, ամէն մէկ գիւղ պարտաւոր է տալ աշխատելու կարող անձեր 15 տարեկանէն սկսած մինչև 60 տարեկան: Ամէն գիւղ պէտք է տայ նաև որքան գումար, եղ ու սայլ ունի: Երանի՛ այն աչքերուն որոնք ականատես չեն եղած այդ դժոխային տանջանքին: Հարիւրաւոր սայլեր, հազարաւոր հայ երիտասարդներ, վերջապէս ամբողջ դաշտի հայ ազգաբնակչութիւնը թափւած է արևու առաջ. կ'աշխատին, արիւն քրտնիք կը թափեն մինչև երեկոյ, և գիշերւան զով օդին առանց քրքրած կապերտ մը իսկ ունենալու, կը պառկին խոտերու ու խոնաւ գետնին վրայ: Այս անտանելի ու բռնութեան տակ եղող աշխատութիւնը, ոստիկաններէն լսած հայհոյութիւնները ու կրած ծեծերն այնքան ծանր չեն, այնչափ դժւար, որքան այդ հազարաւորներու անօթի ու ծարաւ մնալը. արդէն տուններին հաց չկայ, ստիպւած են դնել շուկայէն, այս ու այն կողմէն, ուտել ու աշխատիլ: Փոխանակ վարձ մը, գէթ օրական հացի գին մը վճարելու, կառավարութիւնը այդ դժոխային տանջանքին մէջ իրեն համար ոսկոր մը կրծել կը փնտռէ: Վայ այն գիւղացիին, եթէ ձամբուն վրայ գտնուող ոստիկաններուն, պաշտօնեաններուն՝ ոչխար, իւղ, մածուն, դրամ կաշառք չտայ, չորս օրուան փոխարէն քսանընթրս օր կը զբաղեցնեն. յանկարծ ձամբան կը լայնցնեն, կը նեղցնեն, կրկին քանդել կուտան, կրկին կը շինեն: Աերջապէս ինչ երկարեմ, երկու տարին ամբողջացաւ, որ տեղիս կառավարութիւնը ձեռնարկե՛ր է այդ ձամբուն շինութեանը, բայց դեռ երկու ժամայ տարածութիւն առաջ տարած չէ: Ո՛ւր տանին, եթէ առաջ երթան քանի մը ժամ, կը հասնին Մշոյ և Խնուսի միջավայր ե-

ղող լեռները, ուր քրդաբնակ է, ուր Հայ չկայ, ուր չը կայ շահու ու կաշառքներու աղբիւր: 2է՞ որ ամէն պարա գայի մէջ Հայ տարրը միայն պարտաւոր է աշխատիլ: Այսպէս, մէկ-երկու ամիս զբարեցնելով արգելք եղաւ Հայ երկրագործին իր վար ու ցանքն, ընելու: 2գիտեմ թէ ինչ մտադրութեամբ դադարեցուց ճամբու շինութիւնը, սկսաւ այս անգամ Եփրատի վրայ գտնուող կամուրջի շինութիւնը: Ատ ալ Հայերու բաժինն է, երկու օրւայ Հեռավարութենէ պարտաւոր են քար ու կիր բերել: Ոստիկանները կը մտնեն Հայ գիւղերը, թէ ինչեր կը կատարին մարդ և սայլ Հաւաքելու համար, կը թողում ուրիշ անգամի, եթէ միջոց ունենաւ: Թերթեր են հարկաւոր: Աերջպէս այսօր Մշոյ Հայ գիւղացին շնորհիւ սուլթանի ռեֆորմներու իրագործման (°), զրկած օրական ապրուստէ, կըսկսի գաղթել դէպի Տիգրանակերտի դաշտերը: Ո՞վ գիտէ, գուցէ ոչ մէկը այլևս ետ չգառնայ:

Հարկահանութիւն. — Տաճիկ կառավարութիւնը վերը նկարագրած միջոցներով արդէն կիսով չափ հասած է իր նպատակին. ինչ ընէ որ մնացած գիւղացիներն ալ ոչնչանան. ատ ալ դիւրին է: Հարկահանութիւն, որու ձայնը լսելով Հայ ժողովուրդը սարսափահար՝ անմիջապէս մահ, մահ կը գողայ. բայց կարծես անգութ մահն ալ սարսուած հեռու, հեռու կը փախչի: Հարկահան ոստիկաններն անդադար իրար ետեւէ կը հասնին. կը պատահի շատ անգամ, գիւղի մը մէջ քանի մը տեսակ հարկ կը հաւաքէի, քանի մը խումբ ոստիկաններ, կանոնաւոր զօրքեր կը լինին: Հոգ չէ թէ այս կամ այն գիւղացին իր վրայ ծանրացած տեսակ տեսակ ուղղակի կամ անուղղակի հարկերը վճարեր, լրացուցեր է: Գիւղը գտնուողները պարտաւոր են տալ գաղթականներուն, պանդուխտներուն, սպաննւածներուն և թալանւածներուն յետնեալ տուրքերն ալ: Այո՛, տալ բոլոր հազար երանի՛ եթէ այդպէս կողոպտելէն ետք, թողնէին որ հանգիստ սրտով տրւէր: Իրենք, այդ սովալուկ գազանները, արտօնած են մտնելու ամէն տուն, քաշել ամէն ինչ որ տեսնեն, ծեծել, հայհոյել կիներն ու երեխաները: Ահա այսպիսի յարմար առթի է որ կըսպասեն տաւար, ոչխար գնողներն ալ, որոնք արդէն կապ ունին հարկահաւաք միւտիւրի ու ոստիկաններու հետ: Եթէ եզ մը հարկը դուրուշ կ'արժէ, անմիջապէս կը ծախուի քառասուն կամ յիսունով: Հարկւարաւոր անգամ, անձամբ ակնատես եղած եմ որ աղքատի մը տան մէջ գանւած օրական պարէնը քաշեր ու ծախեր են չնչին գներով, ատ ալ այն պահուն, երբ շալկած կը տանի ջրաղաց աղալու և քանի մը օրւայ անօթութիւնը յագեցնելու համար: Ո՞րքա՛ն մայրեր կուլան, որքա՛ն երիտասարդներ ձեռնածալ նստած կը հալին ու կը մաշին, կը մտածեն ու կը խորհին, թէ ահա հասաւ ձմեռը, ինչով ապրին, ինչպէս իրենց գոյութիւնը պահպանեն: Բայց ո՞վ է Հայ ժողովուրդին կարեկից, ո՞վ անոր ձեռնտու. ոչ ոք...

Քիւրդերու վաճըր ենութիւնները: — Այսօր իրողութիւն մըն է արդէն, որ տաճիկ զինուորները քիւրդերուն այլևս ասպարէզ չեն տար, անոնք աւելի յաջողակ դասեցան թաշնելու և կողոպտելու մէջ: Եթէ քիւրդը անպաշտօն կերպով կը թաշնէ և կ'ոչնչացնէ, ինքը պաշտօնապէս, զինուոր լինելուն համար:

Քիւրդերն արդէն վաղուց հասկցեր ու տեսեր

են, որ իրենց ըրած ամէն մէկ չարիքը անպատիժ կը մնայ: „Համիդիէ“ են, ո՞վ կարող է անոնց վրայ բողոքել: Այո՛, բողոքել, բայց ո՞ր և ո՞րու. կառավարութեան, ինչ կատակերգութիւն. չէ՞ որ կառավարութիւնն է Հայ ժողովուրդի թէ դատախազը և թէ դատաւորը:

Հարունակ այս ու այն կողմէն լուրեր կը հասնին թէ քիւրդերը այս կամ այն հայու գիւղը թաշնեցին, ոչխարները տարան, ևն, ևն: Արդէն այդ բոլորը սովորական է: Աերջերս սպաննւեցաւ Փողարկոյ գիւղի մէջ ռէս Ռաշոյի եղբայրը Պլաշն. նոյն գիւղէն առևանգուեցաւ նորահարս կին մը, որուն էրիկը քանի մը տարիէ իվեր պանդխտութեան դիմած է: Սպաննւեցաւ կին մը Աղճան գիւղացի, Մուշէն վերագարծին դէպի գիւղը: Սպաննւեցաւ Հայ մը Ջիւրէթ գիւղացի, կաղամբանոցի մէջ: Աերջպէս ո՞րը յիշեմ և կամ ո՞րը զանց ընեմ. ամէն օր սպանութեան և կամ առևանգութեան լուրեր են որ կը հասնին: Տաճիկ կառավարութիւնը՝ գիտէ այդ բոլորը ու քմծիծաղով մը կը նայի, գոհ է որ իր կազմակերպած համիդիէ աւազակային խմբերը յաջող կը գործեն:

Սասուն. — Գարնան բացելուն պէս, ուրիշ տարիներէ աւելի բազմութեամբ, քիւրդ աշիրաթները լեցեցան Սասնոյ լեռներն ու ձորերը. անշուշտ, ատ ալ ծրարագրած էր սուլթանէն: Ասոնք ամէն րօպէ առիթներ կը փնտռէին դէպքեր առաջ բերելու, ընդհարումներ ունենալու: Բացարձակ աւերեցին Ա է լի է կ ու զ ա ն ի, Շ է ն ը ք ի ու Ս է մ ա լ ի ցանքերը. բայց սասունցին կարծես խրատած առաջին դէպքէն՝ լուռ ու մունջ տարաւ, թէ և ներքնապէս ակաւները կը կրճտէր և կըսէր. „Լաւ է մէկ անգամէն կոտորուիլ բոլորովին ոչնչանալ քան այս վիճակին ենթարկուիլ“: Բայց կը շարէր բոլորովին, երբ կը մտածէր իր ռազմական ուժի վրայ, իր անտեսական անկման վրայ: 2կայ զէնք, չկայ նոյնիսկ վառօդ ու գնդակ, մեռնիլ, ինչով և ինչպէս, կրկին ոչնչարի պէս կոտորուիլ. ինչ շահ միջև այսօր պարբերաբար կատարուող կոտորածներէն: Այո՛, կը խոստովանինք որ միայն մահն է մեր բաժինը, մահն է որ մեր այս անտանելի դրութեան վերջ մը ու լուծում մը կարող է տալ. մեռնիք, բայց գէթ մեր հարիւրի փոխարէն թշնամիէն ևս կորսնցնենք տասը: Աերջպէս, արդէն աշիրաթի վերագարծի օրերը մօտեցան:

Քիւրդերն իրենց հաշիւները մաքրելէն ետք, տաճիկ կառավարութիւնը շտապեց իբր թէ քիւրդերը վերագարծնել իրենց տեղերը: Ահա լուր կը հասնի որ քիւրդերը Տալուրիկի Սբղանք գիւղէն խափիրութիւն (պահպանութեան վարձ) կը պահանջեն, հակառակ պարագային կըսպանան գնալ թաշնել ու կողոպտել:

Թողունք մանրամասնութիւնները, այս է Մշոյ և շերջակայքի դրութիւնը: Սովն ու մերկութիւնը մէկ կողմէն, միւս կողմէն տաճիկ կառավարութեան ու քիւրդերուն խժդժութիւնները, կողմերու ժողովուրդն օրհասական ճգնաժամի բերած հասուցած են. եթէ այս ձմեռն ալ խաղաղ անցնի հայուն վրայէն հրաշք է. հարկաւ մարգարէ պէտք չէ լինել դուշակելու համար, բայց վտանգը մօտալուստ և փոթորիկը օրհասական է: Եթէ այդ լիրբ Եւրօպան, իր խաբէրայ դիպլոմատներով չի տեսներ դիտմամբ այս բոլորը, եթէ յանուն քրիստոնէութեան ու մարդկութեան միջև այսօր ակնատեսու-

ղաւ հարիւր հազարաւորներու կորստեան, եթէ սուլթանի արժանաւոր եղբայրակից Վիլհելմներու շնորհիւ մուսուլման կը տրուի հազարաւորներու լացն ու կոծը, ճիշն ու աղաղակը, — գէթ թող մեր օտարաբնակ և հայրենաբնակ եղբայրները չմոռնան կողմերուս հայ ժողովուրդը: Ճգնաժամն է արդէն, ժողովուրդը պատրաստ է կուելով մեռնելու, միայն Ձե՛սֆ, Ձե՛սֆ պէտք է իրեն: Անցեալի տխուր անցքերը արդէն սորվեցուցին իրեն մեռնիլ պրօպագանդայի պէտք չունի ինքը: Հայ կիններու ու երեխաներու, ծերերու ու երիտասարդներու արիւնը 19<sup>17</sup> դարու իբր թէ լուսաւորեալ մարդկութեան գլխի շուրջը թող մշուշ կապէ, թող անէծք ու լուսանքով յիշեն Մարդասպանին և պաշտօնական Եւրօպայի արարքները. պատմութիւնը պիտի ընէ իր դատաստանը... Միայն թող հիմա Էջ չմոռնան մեր հայ եղբայրները, թող փութան ու համին, աջակցին ու օգնեն. այն ատեն մեզ համար գծւած ուղիով կը վազենք հոն ուր միայն է մեր փառքն ու երջանկութիւնը:

**Ն Ա Մ Ա Կ Բ Ա Թ Ո Ւ Մ Է Ն**

5/17 փետրւար 98

Սուլթանի կառավարութիւնը 1895-96 տարիներուն անխնայ կոտորելով ու հալածելով իր հպատակ հայերը, հայութեան վերջին հարած մը տալու նպատակով, իր սովորական նենգութեամբ սկսաւ ամէն հնար խորհիլ դրացի ուսու և պարսիկ պետութիւններու մէջ եղած հայերն ալ կասկածելի դարձնելու տեղական իշխանութիւններու աչքին: Իր բնական գործակներն էին օսմանեան հիւպատոսները՝ իրենց պնակալէզներու վոհմակով: Բայց չնայած փչող նպաստաւոր քամիին՝ որ ալիք կ'առնէր ուսու խաւարասէր մամուլի թւերէն, և հակառակ ուսու կառավարութեան սխալ և եսամոլ քաղաքականութեան դէպի օսմանեան հայերը, — որով հողը բաւական պատրաստ կը թւէր, — այդ դժոխային ծրագիրը յաջողութիւն չգտաւ: Կարգադրւած էր հըրդեհ՝ Կօվկասի մայրաքաղաքէն սկսիլ և տարածել դէպի գաւառները: Թիֆլիզի խորամանկ հիւպատոսը այնպիսի յաջող պրօպագանդա մը ըրած էր, որ 96-ի յունաւորին սկիզբները կառավարական բարձր շրջաններն իսկ խաբւած, Դօն-Քիչօսի երևակայութեամբ բռնկած, սկըսան ամէնէն տղայամիտ խօսքերն ու աննշան դէպքերը իբր սկզբնաւորութիւն ընդունիլ հայ կ ա կ ա ն դ աւ ա դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն մը, որ իբր թէ պայթելու էր ջրօրհնեաց հանդէսին: Բայց... բայց խնդիրը շատ շուտ պարզեցաւ, իրեն հետ օսմանեան հիւպատոսի գաւառան դերը երևան հանելով: Աերջնիս ծրագիրն էր երկու կողմի մտքերը պղտորել և իրարու դէմ գրգռել, որպէսզի տօնօրերու մէջ սովորական եղած կինսօյական կռիւ մը շուտով ցեղական գոյն առնէր և սկսէր աւելը: Աւելորդ է ըսել թէ այն ժամանակ ուսու կառավարութիւնը այնքան բարեհաճ էր դէպի իր աշխիւ դրացին, որ ոչ մէկ իրական քայլ առաւ իսկական յանցաւորը պատժելու կամ արտաքսելու:

Անցեալ տարի ճիշդ այս ատենն էր. կրէտէն բռնկած էր. յունական պատերազմի նշանները կ'երևային.

թիւրք կառավարութիւնը ինքզինքը մեծ վտանգի մէջ կըզգար. և ահա ուսուգանի սուրբ օրերուն միթարիչ մօլլաներ եկան Կօվկաս, իսլամի պատերազմները քարոզելու թիւրք գաղթականութեան: Ատոնք պէտք եղածին պէս քարոզեցին և պատրաստեցին թիւրք ամբողջ. եթէ սուլթանի կառավարութիւնը ջանքերու ըլլար, տեղական թիւրքերն ալ յանուն իսլամի պիտի կոտորէին բոլոր քրիստոնեաները և իրենց նւիրական պարտքը կատարած պիտի երթային հանգստանալու ձէննէթի հիւրիներուն գիրկը: Մարդ ալամայ յարգանք կըզգայ դէպի այդ ֆանատիկօսները: Իրենց դերին մէջ որքան բարձր են այդ ձերմակ-գլուխները մեր սևագլուխներէն:

Մովեզրեայ Բաթում, Սուխում-քալէ, Սօջի և այլն քաղաքներու թիւրքերը այնքան ոգևորւած էին որ համարձակ սկսան զէնք գնել, դանակներ սրել և սպաննական խօսքեր արտասանել: Սակայն այս անգամ բարձրէն եկած խիստ հրամաններ ստիպեցին տեղական թիւրքամոլ իշխանութիւնները անմիջապէս զգուշական միջոցներ ձեռք առնել: Սուխում-քալէէն մօտաւորապէս 150 թիւրք բանւորներ աքսորեցան և խնդիրը մարեցաւ, մինչև որ յունական պարտութիւնն ալ վրայ հասնելով՝ եկաւ հանգստացնելու թիւրք տարրը և սմբեցնելու անոր սնապարծութիւնը:

Այս լուրջ խնդիրները սակայն հրապարակ չենտուցան. ուսու մամուլի մեծագոյն մասը, — որ լուս ուղտ շինելու արհեստին մէջ կարող է յաջողութեամբ մըրցիլ թիւրք մամուլ ըսածին հետ, — այս անգամ սուտ խուլ ձևացաւ. կառավարութիւնն ալ խղճի և կրօնի ազատութեան իբր ջերմ պաշտպան (°), հարկ չդատեց խիստ միջոցներ ձեռք առնել թիւրքերու նկատմամբ, որոնք անշուշտ խղճի և կրօնի թելադրութեամբ միայն պիտի գործէին...

Այդ կարգի ընդհանուր ձեռնարկներու մէջ յաջողութիւն չգտնելով, հիւպատոսներն սկսան մասնաւոր անհատներու փնտսելու մէջ գոհացում փնտոել: Իբր փորձ 97 օգոստոսի վերջերը քաղքիս մօտակայ Մախանձաուր թիւրք գիւղին մէջ — որ հայերու և յոյներու ամառանոցի տեղ կը ծառայէ և ուր այդ տարի օսմանեան հիւպատոսն ալ եկած էր ամառելու, — սուկայի չարչարանքներով խողտողեցաւ 5-6 տարեկան հայ մանուկ մը, որուն հարուստ հայրը թիւրքերու կողմէ կը կասկածէր իբր յեղափոխական: Դէպքը, ըստ մեզ թրքական բարբարոսութեան շատ սովորական նըմուշ մըն էր, սակայն մեծ ազդու հանց թէ կառավարչական և թէ հասարակութեան խաւերուն մէջ, որովհետև հայրը միացած իրեն գաղափարակից տիմարներու հետ սկսաւ պնդել թէ յիշափոխականներն ըրին՝, գիւտը հիանալի էր՝ մանաւանդ տեղական պաշտօնեաներու դիրքը չխախտելու և թրքական մեքենայութիւնները ծածկելու համար: Մինչև, հիմա անցան 5-6 ամիսներ և քննութիւնն ուրտեղն էր, հոն կանգ առած է. քանի մը անմեղ բանտարկութիւններ եղան — հարկաւ հայերէն — և գուցէ ասկէ վերջն ալ քանիներ պիտի երթան լցնելու խոնաւ խուցերը: Փոխանակ թիւրք գիւղը պատասխանատու բռնելու և հանգոյցին ուրկէ ծայր առնելը գտնելու, — որուն օսմանեան հիւպատոսարանի շրջանակին մէջ սկիզբ առնելու հաւաստիքը կայ, — անգամ մը շեղւած իր բնական ուղ-



ղուծենէն՝ քննութիւնը սկսեր է տատանուիլ և լաբիւրինթօս մը դառնալ որուն մէջ անվերջ պտոյտներ ու ոլորներ շատ պիտի գործեն հանճարեղ քննիչներ և ինքնաբոյս դիպլոմատներ:

Թէ խնդիրը ինչ էլք պիտի ստանայ և կամ ո՞ր անմեղը պիտի դատապարտուի, հոգ չէ խնդիրը, այլ այստեղ անգամ մըն ալ կ'ուզենք հրապարակաւ շեշտել այն խորին տգիտութիւնը և փաստեր ըմբռնելու անընդունակութիւնը, որ տակաւին հայ ժողովրդի յայտնի մէկ մասին մէջ կը տիրէ:

Հակառակ համաշխարհային համոզմունքին այդ մասը դեռ չէ կրցած ըմբռնել թէ յեղափոխութիւնը դրումի կամ լուբիայի պէս բուսած չէ քանի մը գլուխներէ, այլ իր խորունկ արմատներն ունի ժողովրդի մէջ իբր արտացոլումը դպրութեան կուր: Թէ յեղափոխութեան պատճառաւ չեն որ ծագած են թիւրք կառավարութեան կոտորածներն ու ճշունքները, այլ թիւրք կառավարութեան խժգժութիւններէն ու ճշունքներէն, թէ յեղափոխութիւնը բնաւ դադրելիք չունի, քանի չվերնան զինք ստեղծող պայմանները:

Այո, ժողովրդի այդ մասը, տարօրինակ յամառութեամբ մը, այսքան փաստերու և այնքան յեղափոխական հերոսութիւններու հանդէպ, հերոսութիւններ, — որոնք նոր ակնածանք մը ազդեր են օտարներուն և նոյն իսկ կարմիր սուլթանին, — դեռ չ'ուզեր իր սրտին մէջ համակրանքի տեղ մը տալ յեղափոխութեան և այդ բաւական չէ, ամէն ծանր պարագայի մէջ, չի վարանիր թուժակի պէս կրկնել Մեծ Պարզասպանի խօսքերը. «Յեղափոխականներն են պատճառը»: Ո՞վ էր ձեզ կոտորողը, ո՞վ էր հազարաւորներ այրողը և մահ-մատականացնողը. ըսէք տեսնենք, ո՞վ էին ձեր կոյս աղջիկները, ձեր հարսներն ու կիները լլկողները, ո՞վ էին արգանդի մանուկները նիզակներու ծայրն անցուցած վայրենի ուռաւներով խորոված ընողները. և ո՞վ էր վերջապէս օտար աշխարհներու մէջ ձեզ թշուառացնելու և ոչնչացնելու ձգտողը:

Ձեռնք պատմութեան այդ հրեշտային էջերը, որոնք յակայն դեռ ա՛ն ց ե ա լ չեն մեզ համար, մի՞թէ այժմ ալ թիւրքերը դադրած են երեխաներ բռնաբարելէ և թարմ ուժեր խողխողելէ:

Եւ այսչափ միջօնաւոր, անուրանալի փաստերու դիմաց, դեռ կը գտնուին մարդիկ — հայ անունը կրող — որ իրենց թոյլ կուտան անհեթեթ կարծիքներ ունենալ հայ յեղափոխութեան մասին:

Այո, յեղափոխութիւնը եզաւ և պիտի ըլլայ սուկումը բռնաւորին, անողը՝ վատերուն նկատմամբ, խիստ անսիրտ-անտարբերներուն ձաղկող՝ կեղծերուն, արհամարհող՝ ամէն կարգի տիրացուներուն:

Ողորմելիներ, երբ խելքի՛ պիտի գաք վերջապէս...

\* \* \*

Օսմանեան հիւպատոսը այնքան լըբացեր էր իր անպատկառութեան մէջ, որ 5-6 ամիսէ իվեր երկիր վերադարձող հայերուն և նոյն իսկ թիւրքերուն, իբր հաւատարմական երգում, միտօսական ձևերով համբուրել կուտար. «Աստուածածին» մը վերջերս միայն քաղաքականութիւնը փոխելով, պոչը ներս քաշեց և այդ պատկերն ալ անյայտացուց:

Յունաց Գէորգ արքայորդու Կրէտէի կառավարիչ ընտրելու ռուսական առաջարկութիւնը այնքան կատեցուցեցր է տեղիս թիւրքերը, որ սկսեր են Մարդասպանին քաջալերական հանրագրեր խրկել, որ ոչ մէկ զիջում չընէ. իրենք ալ պատրաստ են ամէն տեսակ զոհողութիւն ընելու... յոյներու օրօրոցի վերջին մանուկն ալ կոտորելու համար...

Յ Ի Ս Ո Ւ Ն Տ Ա Ր Ի Ա Ռ Ա Ղ

Եւրօպական շքեղ մայրաքաղաքները ծփում էին արեան գոլորշիների մէջ: Ժողովուրդների և նրանց դարաւոր ատոյեանների միջև մի հսկայական մենամարտ էր կատարւում: Յեղափոխութիւնը պայթել էր Պարիզում և ապա միաժամանակ Ղիէնայում, Բէրլինում, Իտալիայում: Արիւնագոյն դրօշը վեհապանծ ծածանւում էր բռնապետների պալատների առջև, և ազատութեան ծառուի ամբոխը մոլեգին գրոհ էր տալիս դէպի աջ և ձախ՝ կեցցէ՛ ու մահ՛ աղաղակելով — կեցցէ՛ սահմանադրութիւնն ու ժողովրդական իրաւունքը, անկցի՛ միահեծան բռնապետութիւնը, մահ՛ թափաւորներին ու իշխաններին...

Պանծալի օրեր էին: Բռնակալութիւնը պատանուում էր և թաղւում առմիշտ, անդառնալի կերպով, ժողովրդական վեհապետութիւնը՝ դարերով արհամարհւած՝ գալիս էր նրա տեղը բռնելու: Յեղափոխութեան զարկը եկաւ Փրանսիայից: Դիւցազնական Պարիզը արդէն շատ անգամ էր թափ տւել իր առիւծային գլուխը: Ղաղուց նա մահ էր հրատարակել բռնակալութեան դէմ, դեռ անցեալ դարու վերջերին, երբ նա հանդիսաւոր կերպով գլխատեց իր միահեծան պետին: Բայց յեղափոխութիւնը չաւարտեց իր արիւնոտ շրջանը: Նոր պետեր եկան ու նախկին ամբարտաւանութեամբ, մտրակըն առած՝ նստեցին Փրանսիացու գլխին: Եւ Ռօբէսպիէրների ու Դանտօնների սիրուն հայրենիքը չէր դադարում յեղափոխական կռիւներ մղելուց, նա չէր դադարում արիւնոտելուց:

Սակայն 1848 թվի փետրւարեան շարժումները, որոնք միանգամ ևս թնդացրին յեղափոխական, ըմբոստ Պարիզը, մի բացառիկ դիրք ունին նորագոյն պատմութեան մէջ: Յեղափոխութեան ահեղ որոտները տարածւեցին կայծակի արագութեամբ և արձագանգ գտան հարևան երկրներում. Եւրօպան բոցավառւեց, ելեքտրականացաւ:

Ուղիղ 50 տարի առաջ, մարտ ամսի 13-ին Ղիէնայի ժողովուրդը բորբոքւած Պարիզի շարժումների լուրերով՝ հրապարակ ելաւ և պահանջեց աւատական կարգերի վերացում, մամուլի, գումարուճների ազատութիւն: Յուզումները հանդարտւեցին միայն Մէտէրնիխի հեռանալով: Ղերջնս ամէնանենգաւոր դիւանագիտութեան և ինքնակալ միապետութեան նշանաւոր փաստաբաններից էր: Երկու օր անցած՝ Ղիէնա ժամանեց Ունգարական պատգամաւորութիւնը և պահանջեց թափաւորից անկախ մինիստրութիւն Ունգարիայի համար: Ժողովրդի սպառնական դիրքը ստիպեց աւստրիական միապետին այդ զիջումը ևս անել: Երկու օր էլ անցած՝ մարտի 17-ին ապստամբեց Վիլնը, որ նոյնպէս հեծում էր Աւստրիայի լծի տակ: Թագաւորը անպատմելի շարման ու սար-

սահի մէջ աճապարեց սահմանադրութիւն հրատարակել: Բայց շուտով պայթեց մի նոր ապստամբութիւն և թագաւորը ահաբեկւած՝ փախաւ Տիրօլ:

Ապստամբութիւն էր Սիկիլիայում — դարձեալ յանուն սահմանադրութեան. ժողովուրդը ամէն տեղ դողացնում էր բռնակալներին: Ապստամբութիւն էր Բոհէմիայում, ուր գլուխ էին բարձրացրել չորս միլիօն չէխեր, արինահեղ կռիւներ տեղացին ժողովուրդի և կառավարութեան զօրքերի միջև: Յաղթուում ու յետ էին նահանջում զօրքերը. տարերքային հոսանքի պէս առաջ էր սլանում կատաղած ամբօխը, ով էր յանդգնել կանգնեցնել նրան...

Վիեննան ազգանշան տւեց Բէրլինին: Ռամկավարութեան ուրւականք այնտեղ ևս բարձրացաւ սպառնալից. պայթեց մի զարհուրելի ճակատամարտ, որ յաւէտ փայլուն կը մնայ յեղափոխական տարեգրութեան մէջ: Կարճ միջոցում Գէրմանիան ևս արեան թատր դարձաւ: Իշխանները այդտեղ էլ շտապեցին տեղի տալ և սահմանադրութիւն «պարզեւել»: Ջնջեց ցէնզուրան, մամուլի, խօսքի, դաւանանքների ազատութիւն յայտարարեց:

Ամէն տեղ յեղափոխութեան յաղթանակն ենք տեսնում. միմիայն Փրանսիայում նա նսեմացաւ անթիւ թանկագին կուռոյների անխնայ ջարդերով: Ամբօխը իսկական հերոսն էր այդ ազատարար կռիւների մէջ: Վարձու աշխատաւորներ, տան ծառաներ, ուսանողներ, բռնակիրներ — սրանք էին յեղափոխական գլխաւոր տարրերը: Նրանք պատնէշներ էին կառուցանում փողոցների մէջ, տների կուռոյներից քարէ կարկուտ էին թափում թագաւորական սպառազէն զօրքերի վրայ: Ամբօխի մոլեգնութիւնը չափ ու սահման չունէր. նրա առաջ զարհուրանքով յետ-յետ էին քաշում զինուորները, և բարձրաձայն հնչում էր յաղթական ուռուան, անպատմելի խանդավառութեան մէջ ծածանւում էին դրօշակները. կեցցէ սահմանադրութիւնը — զարհուրելի, ցնծագին աղաղակներով ձայնում էր ժողովուրդը...

Այն ինչ թագաւորները՝ զարգանդած այդ վիթխարի ու ահեղ կոչումներից, մի ելք էին որոնում իրենց յանցաւոր գոյութիւնը ազատելու...

1848-ի արիւնոտ թւականը — իրաւամբ կարելի է ասել — սահմանաքարը դրեց ստրկութեան ու ազատութեան, արսօլիւտիզմի ու ռամկավարութեան միջև բովանդակ եւրօպայում: 1848 թւի յեղափոխութիւնը ուժգին զարկ տւեց ազգայնական անկախութեան ձգտումներին Իտալիայում, Ռենգարիայում, Գէրմանիայում և Գանուբեան երկրներում: Հին եւրօպայի խարխուլ շէքերը փլատակեցին, իրենց աւերակների տակ թողնելով Ֆէօդալական աշխարհի կեղտն ու ապականութիւնը: Բայց ազատութեան գաղափարը լիովին չյաղթանակեց, յեղափոխական գործի շարունակութիւնը ժառանգեց յետագայ սերունդներին: Եւ սերունդները ապերախ չեղան: Այսօր ահա նրանք տօնում են ցնծութեամբ 50 տարի առաջ իրենց պայքարի ձեռքով կատարած վսեմ գործի յիսունամեայ տարեդարձը: Եւ արեւմտեան եւրօպան թնդում է ծայրէ ծայր նոյն որոտնդոսս կեցցէներով, որոնք դուրս են բղխում համայն աշխատաւոր ընդհանրութեան բերանից, ազատութեան և եղբայրութեան բոլոր անկեղծ բարեկամներից:

Հրճում են այն տարրերը, որոնք միշտ մարտնչող են յանուն առաջընթացութեան ու ժողովրդական բարեկեցութեան, հրճում են նրանք, տօնելով ու մեծարելով անցեալ քաջ նահատակների ինկեղծ յիշատակը:

\* \*

Տօնե՛ք և մեկը: 1848 թւականի ազատութեան նահատակ-հերոսների քաղցր յիշատակը թող մեր սրբտերում ևս յաւերժանայ: Գնանք նրանց շաւղով և սովորե՛նք նրանցից մի հիմնական և անհրաժեշտ բան. ազատութիւնը երբեք չեն մուրճում, այլ բռնի կերպով յափշտակում են:

Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ծ Ո Ի Բ Զ Ը

Թիւրքան հաւքաշ ընելու ծրագիրը անժամայէս կը մրսփէ: Տաճկաստանի լրուծիւններուն բողոքողը բարձրացած ժխտը ուրիշ բան չեղաւ, այլ տեսակ մը գոռոտամտմով ուր մարդիկ իրարմէ բան մը չի հասկցած կը քաշուին:

Բայց այդ տխուր անցքերը լարեցին միջազգային քաղաքականութեան զսպանակները. հնչաւէս նաեւ... սխորժաւը:

Արեւելեան ինտիլը Սսիոյ շըջանը կընէ հիմա: Եւրօպական թագակիրները որոնց կըտէն վար, ծնած օրերնէն, աստուած սուր դաշոյն մը կը կախէ, մարդկութիւնը երբեմն երգեմըն քաղհամը ընելու համար, Ասիոյ մէկ ծայրէն միւսը ծղլ. (course au clocher) կը վազեն: Աշխարհ ահաւս կը նայի այդ վսեմ ու շնքաղց անզններուն որոնք «հեւանը մարդէն» զինական ուղիւն լէշին վրայ կը խուժեն:

Քաղաքակիրթութիւնը իրերու անորոշութիւնը հանդարտութեան տակ, ընկերային մեծ տազնաւ մը կանցնէ այս քաղէիս: Ան պոռնիկ «խաղաղութիւնը» որ Հայաստանի ու Կրէտէի արիւնոտ դաշտներուն շըջանն ըրաւ, ղնու կը թեւածէ հրետանիներով պատնէշած միո յորդանին վրայ, հերք է որ պոռնիկ մտիլ մը իմայ. տիեզերական բռնկումը անխուսափելի է: Փոքրին կտրաշխարհ մը գուցէ:

Չէ՛ որ քրիստոնէութիւնը «լացի հովիտ» կանւանէ այս աշխարհը, որը ցամաքի պէտք է թըշու գանի:

Շատ ընեք Գերման կայսրը, որուն ծառերը աստուծով ու յիսուսով քացախսխտորած են, եւ որուն համար մարդկային կեանքը լուի շափ գին չունի, կըսէր «արիւնը պէտք է խաղաղութիւնը ու աշխատանքը պահպանելու համար»: Ծնմարիտ է որ, բռնակալութեան արմատները չը շորնալու համար, արեւն անհրաժեշտ է:

Արիւնը Հանթօթիսն ալ շատ կը պիտնար. իր քաղաքական հարամտութիւնները մարդկու համար: Երբ հողը կը վառէր հայրութեան տարկրակ արիւնէն, Փրանսայի արտաքին գործերու նախարարը, միակ մարդն էր որ սուլթանի օմարդութիւնը կըսէր: Ռիշելիէն ժամանակակից թագուհին առջև կեղևտակօրէն սարապանտ կը կարաւէր անոր շնորհները վայելու համար, զարմանք չէ որ Հանթօթն ալ առատաստիքտ խալիֆային ղիմաց քէօշէք խաղար, որովհետև:

Dans ce bas monde, il faut aimer toutes choses; surtout... le Sultan. Հանթօթն ակաղեմականի անմահութիւնը շորթիլէ անաշ Հադիտն անմահացնելու անմահութիւնն ալ ունեցած էր արդէն: Կրկին անմահութիւն...

Ռիշելիէն ծագուլը միշտն հիմա մանչցու անշուշտ ան «ձու ղրախար» որ Թիւրքիա կը կըշի:

\* \*

Հայրութեան միշտ, սարեր, ծորեր ու ծովեր պատուով ետքը հագի կը հասնէր թժացած Եւրօպայի ակամշին, ան ալ զըզըզում ու նաղկ վիճակի մէջ: Բայց Մակէղոսիան այնպէս չէ. պալքարմներու կտուէն Պուլկարիան սակնը կը ղնէ իր նախալկեցներու լաց ու կոծիլ, անոնց յուսահատական սպառնակներուն, եւ իր հրացանը կը պատրաստէ... Պուլկարիոյ եւ Թիւրքիոյ կապիցը շատ պրկւած են: Ո՛վ

զիտէ, գարունը Մակեդոնիոյ համար, յաւիտենական գարունի մը քարեզուակ թւակամը ըլլայ թերևս...

Կրէտէի կացութիւնը մագի շափ փոխած է: Պետութիւնները բան մը չըրած անսովորաբար կը փստորեն, այնքան սկուայ կը կտրցեն իրարու. եւ պուտ մը ջրին մէջ իրար կը խելուեն:

Պետութիւնները ոչ միայն ցարդ ներգործական դեր մը չունցան, այլև ունենալու ալ հակամէտ չեն:

Թանի ազդու բացատրութիւնով, «ապիկէ շուներու պէս անշարժ իրարու երես կը նային» միայն:

Կրէտէն է, ինչ որ էր առաջ: Սուլթան, պաշտպօղուք, թըշ-լստութիւն եւ Կրէտէ...

Համիտը կը հաւատայ արդեօք թէ ոճիրներով հուն կելլէ իր իրաւագրանը հպատակներուն հետ: Սուլթանի ըէյֆը «այնպէս կուզէ»-ով, չի լռեր կեանքի ու արդարութեան ծայրը: Գիտութեան կատարելագործումներու դարուն մէջ, անպատիժ է կարելի խաղալ ազգերու ծակատագրին հետ. որոնք մարդկային անընթացաբեր սրբազան օրէնքով իրենց գոյութիւնը անկախօրէն պաշտպանելու ընտան նախածեղութիւնը ունին:

Շատ պարզ է...

\* \* \*

Որսկաններ. -- Ահաւոր Ռիշէօն կը պարծնար ըսելով, «ամէն բան կընեմ» ու յետոյ կարմիր ծիրանիով կը ծածկեմ: Նոյն սկզբունքով ըսողներ կան մեր մէջ «ամէն խաղ կը խաղայիս ու ետքէն դացազանութիւններով ազգը կը շլացնեմ»... մարտասանութիւնը կլլած աս մարդիկ երբ կեղահարձ թերթերու մէջ իրենց մեղեդին կուզեն երգել, կսկսին ծանրածանր Թախիճներով սքալ: Ազգային դժբախտութեան լուծը կորաքամակ ըրած է աս հոյակապ գլուխները:

Ազգահատար մը կզգայ մարդ ատ ետ-դարձողներուն համար, որոնք ծառին վրայ կոծը պտորած պտուղի պէս ալ հիւթ չեն ծծեր արմատէն, հապա արեւելիկ տարութեան մէջ խակուած հասունութիւնով մը ամէն քիմքերու գոհացում տալ կը նկրտին: Իրենց յատկանքը բազմեքեսանի ըլլանէ, կեանքի յեղեղութիւնը, սկեպտիկութեան ծակծակ տառատողը նետած է վրանին: Երբ ազգային ինքնիշխանութիւնը մտնէ, ծնկի պոչով հերոսական մտածումներ կը յղանան. զիտեն իրենց զգացումներուն մէջ, ամէն տեսակ երակներ հիսել ծծումքէն մինչեւ... գտնիկ. մանապէս երբեմն սրտագեղումի ջրհեղեղներ ունին. կերելի հայերուն բերանփոխի ծաշակը տալ կուզեն:

Իբր երազահան, քաղաքական ելեւէջներու ատեն, կարող եւ խորհուրդ հարցնել ազգասէր թերթին. հոն կը գտնես հայրենասիրական շինել, լոհակամն օլտուքրաններ, ու յեղափոխութեան դէմ թուրումնը: Վերջապէս սազի թեւաքախումներէ գա՛տ՝ ործելէ՞ք փիլիսոփայութեան մը խաբուսիկ մտածումները կը գործակին, իրենց ծակցնաթի անիւներուն տակ յեղափոխութեան ոսկորները շարդոտելով...

Սակայն Հայաստանի վրայ սաւառնող ողբեր ու կոծեր մը ժացող տաղերուն ու կեղծիկ ծեւապաշտութիւններուն կից, աղու օծի մը կեծը կը ծլլայ:

Դժո կայ: Յեղափոխութեան ողջանջին զանգակահարները, ըստ Ս. Իրքին, իրենց հին փսխունքին կը դառնան: Լեռնայն կը հասկցնեն որ սուլթանին խոշոր, շատ խոշոր մեղայա գիծը մը զբնու է, «մենք ըրինք դուն մի ըներ» ըսելով: Հեռատես պատրուակ մը, շեղու ազգապայ յոյսերով եւ յաշողութիւններով...

Մակարոյ քաղաքագէտները, որոնք ատ ասպարէզին մասնաւոր պատրաստիութիւն մը ունենալ կը թւին, իրենց խիստ նըրազմին քաղաքականութեան վը մրացնեն ազգային պատմական անասպններուն զգայնիկ սիրտ մը: Որովհետեւ քաջ զիտեն թէ, մեր ազգային զգացումը բերդին տիրելու համար, անոր պարիսպներուն վրայ Հայկի, Արամի, Տիգրանի անուններով բեռնած շորինք բարձրացնելու է: Բայց շատ ուշ է՞. երեւի կարգվեցիկ պատուելիները, երօպական հողին վրայ, հայ նախապաշարունները փայտիայելու խօլ արշաւէն մշտած, իրենց ածուն հրկեղու իմաստ ունէն: Նա կա տ Կ Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս կուզեն ունենալ: Այլընս իմաստակ ու դեղին կեղծաւորութիւն մը, որ կը կանչէ ծմբարտութեան նստապնդութեան դէմ, իբր թէ այսօրու զաղափարի համար եւ ընտակալութեան դէմ՝ մարտնչող քերտները պատմական խաւարի մէջէ՞ ընդունէին ուրուային պատգամներ, չը յիշենցը մարդեր որոնք յօ կըլեր են ու իբրեւել կուզեն...

Իրաշակութեան դէմ մղած իրենց շիլ կաշակութիւնով, եւ իրերագրութիւններով ազգային փրփրոտ նախամայրոյննոր: Թող ծղին ոսկեզօծ դեղահատիկներ ջամբել հայ ժողովորդին եւ աղ ցանել յեղափոխութեան արտին մէջ:

Մենք անվկանդ կը մանք մեր յեղափոխական կռուին մէջ, կը շարունակենք աննահանջ կուռի դերը. եւ երբեք կարօտը չենք զգար դաւաճաններու ծարալի ու խորամանկ թաղաքականութեանը. ինչպէս կը յորդորեն փորձաւոր զրեկնիր:

Բայց ինչ ըսես.

«Շատ ցաւի տէր շատ զրուցկան կեղծի» կըսէ մշեցին:

Նախկին հնչակեան պ. Սօսի Գուգարեանը, ինչպէս յայտնի է, հնչակեան Կուսակցութիւնից իր հեռանալու պատճառները Թուրքիկ թերթերով պարզելուց յետոյ, ցանկութիւն յայտնեց գործել Իրաշակցութեան մէջ: Բայց որովհետեւ պ. Սօսի Գուգարեանի վրայ ծանրացած էին զանազան ամբաստանութիւններ, հարկ դատուցաւ նախ և առաջ հրաւիրել նրան բացատրութեան:

Չնայած որ այդ գործը քննելու ձեռնհաս կօմիտէի կազմած ատեանն անհիմն նկատեց առաջ բերած բոլոր մեղադրանքները, այստեղ-այնտեղ դեռ ևս շարունակում են պ. Սօսի Գուգարեանի վրայ ամբաստանութիւններ տեղալ:

Ահա թէ ինչու հրատարակելով ստորեւ պ. Գուգարեանի մեզ ուղղած նամակը, մեր կողմից ևս առաջարկում ենք երեւան հանել արդարութիւնը նրա առաջարկած եղանակով:

Այս խնդրի վերաբերեալ դիմումները կարելի է անել խմբագրութեանս միջոցաւ:

«Իրօշակ»-ի առաջիկայ համարում խնդրում եմ տպագրել հետեւեալ երկտողն.

Յայտնի խմբակներ եւ պարօմներ, ինձ վստասելու ուրիշ միջոց չունենալով, խուլ ու մութ անպիւններում միայն գանազան յանցանքների մէջ ինձ զրպարտելու քաջութիւն ունեն:

Ընդ-միջոց վերջ տալու համար այդ պարօմների քաջագործութիւններին, հրաւիրում եմ նրանց ընկերական դատարանի առաջ հաստատել իրենց մեղադրանքները: Դատարանը կը կազմել իմ եւ դատաւարատողների համամայնութեամբ հրաւիրած անծնաւորութիւններից եւ նրա վճիռները կը հրատարակեն ի գիտութիւն հայ հասարակութեան:

Դատ քանալու համար տալիս եմ երկու ամիս քաւակաւաշաւի ժամանակ. ներկայ գրութեանս տպագրելու օրից հաշւած:

Նախկին հնչակեան ՍՕՍԻ ԳՈՒԳԱՐԵԱՆ

Ա Ձ Գ

Իրօշակի նախորդ համարին մէջ տպած Իրաշակցութեան Բարիքի կօմիտէի շրջաբերակաէն ծանօթ քաջագործ Պիլչիլեան անուն մարդուկը, տեսակցութեան մը համար, անուղղակի կերպով Իրօշակի խմբագրութեան դիմում ընելու յանդգնութիւնը ունեցած էր:

Խմբագրութիւնս պատասխանելու ժամավաճառութիւնը թանկ վնահատելով, պարոնը իր ձակատագրին ձգեց:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ. Յ. Գ. ԿԵՐՈՆԱԿԱՆ ՍՆԴՈՒԿՆ ստացած է.

Ոսկանապատ 1,000 ուռլի Կայծիկ 300 ու., Պէտր. 200 ու., Ռոստ. 100 ու..

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Երկնային Կոմիտէն Ա. 26 դար 25 սէնթ. Տ. Վ.-ի միջոցաւ Կոմիտէն 120 ու. Գետուհալ անձնորդ. Հրամար, Հրամար 25-ական ու., Վաշինգտոն 15 ու., Արմենուհի, Գործաւոր, Յոյս 10-ական ու., Հայրենիք, Վրէժ, Վատու, Բուռք, Դիմար 5-ական ու.:

Սուղիւնայէն Համագումար 10 Ֆրանք, Ժընեւէն Հօգա 1 Ֆր., Յիւրիէն Գերթ 2 Ֆր.:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԿԵՂՐ. ԿՕՒԽԵՆ

Գէորգ 183 ու քաղաք դահեկան. Հրահատ խ. 30 դհ., Երու- ղիկ խ. 40 դհ., Կապար խ. 50 դհ.:

ՍԱՆՈՑ-ՁՈՐԻ ԿԵՂՐ. ԿՕՒԽԵՆ

Ալեյան խ. 246 ու կէս դահեկան, Եանթ թիւ 1 խ. 112 դհ., Կայծիկ թիւ 1 խ. 41 դհ., Լուսնակ խ. 260 դհ., Եանթ թիւ 3 խ. 50 դհ., Կարմիր խ. 80 դհ., Սամարիա զիւղէն 353 ու կէս դհ.:

ԿԱՌԱՂԱՆԻ ԿԵՂՐ. ԿՕՒԽԵՆ

Մոսկովի խ. 18 դահեկան, Զրկէժ 20 դհ.: (2)

ՏԱՊԱՐԻ ԿԵՂՐ. ԿՕՒԽԵՆ

Յունար ամսու մուտք. Առաքիալ 108 դահեկան. Սուլիշ 2ՊՁ. 15 դհ., Զրկէժ 2ՊՁ. 27 դհ., Հարած կոմիտէ 15 դհ., Վրէժ կոմիտէ 70 դհ., Կոուի շըձ. (զիկտ. եւ յունար) 50 դհ., Ռշտունիաց 2ՊՁ. 25 դհ., Պերթ (զիկտ. եւ յունար) 20 դհ., Եիմական 10 դհ.:

Փետրար ամսու մուտք. Գիւղձիկ 2ՊՁ. 20 դահեկան, Սուլիշ 2ՊՁ. 35 դհ., Զրկէժ 2ՊՁ. 27 դհ., Կոուի շըձ. 25 դհ., Ռշտունիաց 2ՊՁ. 20 դհ., Պերթ 10 դհ.:

ԿԱՐՄՈՐ-ՔԵՐԳԻ ԿՕՒԽԵՆ

1 սեպտեմբեր 1896 -- 15 հոկտեմբեր 1897-ի մուտքը. Կ. 1,000 դահեկան, Մ. մասնաճիւղէն 1,000 դհ., Բարիլուն թիւ 28,585 չէ- քով 1,000 դհ., թիւ 599 500 դհ., թիւ 553 1,000 դհ., թիւ 552 1,000 դհ., թիւ 551 500 դհ., թիւ 561 300 դհ., թիւ 560 300 դհ., թիւ 562 300 դհ., թիւ 558 200 դհ., թիւ 554 300 դհ., թիւ 563 340 դհ., թիւ 564 300 դհ., թիւ 565 300 դհ.։ Համագումար 3,340 դահեկան ուղեղորով.

ՆԱԽԱՅԱՆԳԻՍՅՈՒ ԿՕՒԽԵՆ

Շահէն 5 ուռլի: Կարմիր քաղաքէն ծիսավաճառ 1,200 ուռլի, Ազատութիւն 1,000 ու., Ազգակից 500 ու., Մարիամ 450 ու., Ժնրուհի 300 ու., Եամ- տան 200 ու., Լուսն, Հայելի, Սիւլիկի 150-ական ու., Հրացան 102 ու կէս ու., Հայրորդի, Բարի մարտ, Նարդու, Համակող, Մոմ, Կրակ, Ազիւթ 100-ական ու., Հայր Արտահամ, Պրըզգեան 50- ական ու., Բամի, Փոթորիկ, Մասնաշալ, Մայր Արարի 10-ական ու.։ Համագումար 5,042 ու կէս ուռլի: Գաղթավայրէն 91-ի Կոմիտէի մասնաճիւղէն մասնաճիւղէն 8. Մ. Մ.-է 200 ու., Կարմիր զիւղէն Սարգիս Կոտորեան 100 ուռլի:

Գաղտ քաղաքէն (1 յուլիս -- 31 դեկտեմբեր 1897) մամբորդ- ներ 26 ուռլի, Արիւն 18 ու., Հայասէր 12 ու., Մշակ 10 ու., Արզան- կան 9 ու., Եանտ, Վրէժ, Բուռուկ, Արտակ Գետուհի, Հայցող, Գարեգլին, Գուրգէն, Լոյս, Մայրամ, Փափագ 6-ական ու., Սո- խակ եւ Պայքար 5-ական ու., Մէրո 1 ու., Մի ոմն 3 ու., Գրիգոր եւ Լուսն 2-ական ու., Կիլիկիոյ 20 կոմիտէ (յունար եւ փետրար 1898) Վարդապետ 20 ու., Զոր 14 ու., Հայրիկ, Խորէն, Եանպան, Ռըշ- տունի, Թիւրքիստան 12-ական ու., Բագրատունի 11 ու., 50 կ., Յօժա- րակով, Կրակ 7-ական ու., Արիւն 6 ու., Աշոտ, Եարար, Սապիկ, Ամենէր Եղարար, Յոյսի Վարդա 5-ական ու., Հայասէր 1 ու., Հա- ղի, Կէրուշ 3-ական ու., Կիլիկիոյ 2 ու. 50 կ., Երկայտող, Գարե- գլին, Գետուհի, Եանտ, Արտակ, Բուռուկ, Վրէժ, Լոյս, Արշակու- նի, Ժնր, Տասը դարբին, Վիճար, Գուրգէն, Փափագ, Համրե- րատար 2-ական ու.։ Միսակ, Զարոյ, Կամիս, Արեւտակէս մէյ- մէկ ու.։ Համագումար 353 ու. 20 կոպ.։

Առաջադր քաղաքէն Խաչո Արուստի 20 ուռլի, Գաղտու 3 ու., Ժողիկ 2 ու., Գիտուն 1 ու.։

Մեւ-Ջուրէն Անդրապատէն քաղաքակա Կրացան մը 150 փամիուշ- տով, Ռարթէն քաղաքակա Կրացան մը 140 փամիուշտով:

Ժնր. -- 1897 Նո 15-ի Հուր քաղաքի ցուցակն մէջ (1 յունիս -- 31 օգոստոս) մոտցած է Ա. Կ., Պէլի Գարա, Ներկարար 3-ա- կան ուռլի, Սեւան 1 ու. 50 կ.։

ՈՍԿԵՂՆԵՐԻ ԿՕՒԽԵՆ

Բարեկիրտ 480 դահեկան, Ալք եւ Եալիկ 65 դհ., Ռարուպ խ. 52 դհ., Արար սխալար 20 դհ., Անդրանիկ խ. 20 դհ., Կանգուն 10 դհ., Ռուքիստան խ. 10 դհ., Անիկան Եղարար 10 դհ., Մամիկնի- եան խ. 13 դհ., Հեթրա 5 դհ.։ Համագումար 685 դահեկան:

Յուր-Երկաթ քաղաքէն Բարսեպոս եւ Բագրատունի խում- քեր 110 դահեկան, Ռուքիստան խ. 72 դհ., Եարբու, Կամեցող, Լու- սն, Ժնրուհի, Կարմրոտ 10-ական դհ., Պարտէզ 20 դհ.։ Հա- մագումար 252 դահեկան:

Ժնր. -- թիւ 2 (82)-ի Անիսահարի ցուցակն մէջ մոտցած էր Վահագն (Նոյ. ղիկտ. յուն.) 60 դահեկան:

ՊԱՆՔԱՆԵԱՆ ԿԵՂՐ. ԿՕՒԽԵՆ

Մ. քաղաքէն Տիկին Փ. Կոտակով 100 Ֆրանք. Աշոտ Մանուէլ 25 Ֆր., Սարգիս Սիմոն 20 Ֆր.։

Գետակէն Գազիկ խ.-էն երկու ամսավար 11 լու.։

ՄԱԿՆԹՕՆ ԿՕՒԽԵՆ Կայրահաց Եարէ ընկերութեան ամ- սավաճարներ 377 Ֆրանք 30 ամսեկով, Նոյն ընկերութեան միջոցաւ կատարած միջակահանութիւնէն 1,000 Ֆր., Արեւելեան խ.-ի սկա- ւումներ -- դեկտեմբեր 1897-ի ամսավաճարներ 165 Ֆր. 30 ու., Նոյն խ.-ի Նէր միջակահանութիւնէ 10 Ֆր. 40 ու., Բարիլէն Սիւնի խ.-ի յունիս -- դեկտեմբեր 1897-ի ամսավաճարներ 99 Ֆր., Գրասիրաց Եղարարութիւն Նէր 9 Ֆր. 25 ու., Խաղի տուգանք 16 Ֆր. 75 ու. պատկերներու վաճառումէ 20 Ֆր., Անիւմ (Ժ.) 6 Ֆր.։ Համագո- մար 1,704 Ֆրանք 20 ամսեկով:

ԿԻՊՐՈՍԻ X. ՔՂ-Ի ԿՕՒԽԵՆ

Փետրար ամսու մուտք. Հէրիւ, Մէնտայ, Եարեան, Արա- մէյսէկ շիւլին. Կալիպոս, Պետ, Ասօ, Վարազ, Բէնիս կէս-կէս շիւլին: Համագումար 6 ու կէս շիւլին:

ԱՂԵՍԱՆԳՐԻՈՑ ԿՕՒԽԵՆ

1897 սեպտեմբեր, հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներու մուտք. Կօզան քէյ 90 դահեկան, եւս Նէր 100 դհ., Մեղու 90 դհ., Անաստ. Մուրալեան 80 դհ., Յ. Ազիզ, Հայ Գրիգորեան, Պօլսեցի, Գեաւուր Օղլու 60-ական դհ., Կանանակէն 56 դհ., Անիւմ 36 դհ., Տէրախո, Յ. Մ., Մրմ. Վարդ, Գիւղէկ, Միւթիւնը փոխութիւն է, Տիկին Մայր Հայաստան, Տիկին Եռչանիկ, Յոյս, Եր. Գերթ 30-ական դհ., Ա- շոտ 25 դհ., Յ. Դազ. 24 դհ., Մրտտ, Յուսիկ, Ե. Գ., Բէշիշեան, Կին- դահացու, Այլայլ, Գայլ, Հուր 20-ական դհ., Բաշ Մ. 15 դհ., Խորեմացի, Սիմոն 2., Խոսիթամաս, Ա. Հ., Տիտոն, Գ. Վարդ 10-ական դհ., Տատուր, Պ. Երեմեան, Մ. Ազիզ 5-ական դհ.։ Համագումար 1,261 դահեկան:

ՍՕԼԵԿԻԼ ԿՕՒԽԵՆ

1897 դեկտեմբեր 28 -- 1898 մարտ 19-ը Կալարած ամսավար- ներ 96 մարկ:

ՓԱՐԻՑԻ ԿՕՒԽԵՆ

Մժնղ 25 Ֆրանք, Պիժակ, Համլէթ, Բարիլէն, Գալարար մլ յմկ Ֆր., Մեղու, Նարին, Վրէժ, Խումք, Նէր 50-ական ամսեկով: Հա- մագումար 31 Ֆր. 50 ու.։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Վարդէս. ա.) Homo homini lupus (Մարդը մարդուն կալ). Ջրոցց: Բ.) ԲԻՔԻՋՆԵՐ (Արեւելեան աղաս քանաստեղծութիւն):

Գ. Յ. Գաշնակցութեան Կոմիտէ չեղած տեղերից գի- մէլ խմբագրութեան:

Խմբագրութեան գիմէլ Հետեւեալ Հասցէով  
Redaction du Droschak, Genève (Suisse)